Ինչպես աղջիկները օգնեցին փոքրիկ եղբորը

Լյուսի Սթիվենսոն Էվել
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել Հարավային Աֆրիկայում:

Լաշիան նոր փոքրիկ եղբայր ունեցավ: Նրա անունը Լիամ էր: Նա ուներ մուգ մազեր և փոքրիկ ձեռքեր ու ոտքեր: Նա այնքան սիրունիկ էր:

Բայց երբեմն նոր փոքրիկ ունենալը ընտանիքում դժվարություններ է առաջացնում: Մաման և պապան այժմ միշտ զբաղված են: Իսկ Լիամը շատ էր լաց լինում:

«Մամա, կարո՞ղ ես ինձ համար մի պատմություն կարդալ», - խնդրեց Լաշիան:

«Ես պետք է տաշտակում լողացնեմ Լիամին», - ասաց մաման: «Միգուցե դու կարդաս մի պատմվածք Արիանայի հետ»:

Լաշիան նստեց հատակին իր փոքրիկ քրոջ հետ: Նրանք թերթում էին գրքի էջերը: Բայց առանց մամայի այն չէր:

«Պապա, որևէ խաղ կխաղա՞ս ինձ հետ»,- խնդրեց Լաշիան:

«Ես պետք է օգնեմ մամային երեխայի հարցում՝ նախքան աշխատանքի գնալը»,- ասաց պապան:

Լաշիան խոժոռվեց: Մաման ու պապան այժմ ժամանակ չունեին իր համար: Նրանք միշտ օգնում էին Լիամին:

Այժմ ոչ ոք ժամանակ չուներ Լաշիայի համար:

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ԷՄԻ Ա. ՄԵՆԱՀԷՄ

Շուտով պապան գնաց աշխատանքի: Մայրիկը Լիամին քնեցրեց: Ապա Լաշիայի և Արիանայի հետ նստեց բազմոցին: Նա հոգնած տեսք ուներ:

«Մենք շատ զբաղված ենք Լիամով»,- ասաց մայրիկը: «Դուք մի քիչ միայնակ եք զգում, այնպես չէ՞»:

Լաշիան գլխով արեց: Նա կարծես ուզում էր լաց լինել:

Մաման գրկեց Լաշիային և Արիանային: «Լիամը հիմա շատ օգնության կարիք ունի, որովհետև նա այնքան փոքրիկ է: Նա դեռ չի կարողանում ինքնուրույն որևէ բան անել, ինչպես դուք եք կարողանում»:

«Ես գիտեմ», - ասաց Լաշիան:

«Բայց եթե ուզում եք, կարող եք օգնել ինձ հոգ տանել Լիամի մասին»: Մայրիկը ժպտաց:

«Իսկապե՞ս», - հարցրեց Լաշիան: Նրան դուր եկավ այդ միտքը:

«Ես էլ»,- ասաց Արիանան:

«Դու էլ»,- ասաց մայրիկը:

Շուտով Լիամը սկսեց լաց լինել: Երբ մաման փոխում էր նրա բարուրը, Լաշիան բերեց անձեռոցիկները:

«Շնորհակալություն», - ասաց մայրիկը:

Հաջորդ օրը, երբ Լիամը լոգանք ընդունեց, Լաշիան և Արիանան մաքուր հագուստ ընտրեցին նրա համար: Դրա վրա գեղեցիկ փոքրիկ կենդանիներ էին: Նրանք տվեցին այն մամային, որպեսզի հագցներ Լիամին:

«Շնորհակալություն», - ասաց մայրիկը:

Լաշիան ու Արիանան մտածեցին օգնելու այլ եղանակների մասին: Նրանք ամեն առավոտ հավաքում էին իրենց անկողինը առանց որևէ մեկի խնդրանքի: Երբեմն նրանք հավաքում էին նաև մամայի ու պապայի անկողինները: Եվ երբ ճաշի ժամն էր, նրանք օգնեցին պապային խոհանոցում:

«Շնորհակալություն», - ասացին մաման ու պապան:

Երբ Լիամը լաց եղավ, Լաշիան փորձեց օգնել նրան հանգստանալ: Նա գրկեց նրան և խոսեց մեղմ ձայնով: Լիամը դեռ չի կարողանում շնորհակալություն հայտնել: Բայց մի օր նա լայն ժպտաց Լաշիային:

Ի պատասխան՝ Լաշիան ևս ժպտաց: Նա ուրախ էր, որ կարող էր օգնել իր փոքրիկ եղբորը և իր մամային ու պապային: ●

Ինչպե՞ս Լաշիան օգնեց իր ընտանիքին: